

## Գաղտնիության պաշտպանության փաստաթերթ

Գալիֆորնիայի Զարգացման ծառայություններու բաժինը (Բաժինը) եւ 21 տարածաշրջանային կեդրոնները կ'աջակցին աւելի քան 500,000 անհատներու որոնք ունին իմացական եւ զարգացական հաշմանդամութիւն (Անհատներ): Աջակցութիւնը կ'իրականացուի ծառայություններու եւ աղբիւրներու միջոցով, որոնք նախատեսուած են անհատներու եւ անոնց ընտանիքներու, ներկայացուցիչներու եւ փաստաբաններու համար:

Որպէս այս ծառայություններու նախագծման եւ մատուցման մաս, Բաժինը եւ տարածաշրջանային կեդրոնները կը հաւաքեն, կը պահպանեն եւ կ'օգտագործեն միայն անձնական տեղեկութիւնները, որոնք անհրաժեշտ են այս առաքելութիւնը իրականացնելու: Գաղտնիության մասին դաշնային եւ նահանգային օրէնքները կ'ըսեն որ բաժինը եւ տարածաշրջանային կեդրոնները չեն կրնար բացայայտել ձեր մասին տեղեկութիւնները առանց ձեր հրամանին, եթէ չկայ այլ օրէնք, որ թոյլ կու տայ զայն ընել:

**ԿԱՐԵՒՈՐ.** Այս Փաստաթերթը կը հայթայթէ մէջբերում գաղտնիության ձեր օրինական իրաւունքներուն: Օրէնքը կը նկարագրէ որոշ իրավիճակներ, երբ ձեր տեղեկութիւնները կրնան բացայայտուիլ: Կը խնդրենք այցելել [Գաղտնիության վարժութիւններու ազդագիր](#)-ը ամբողջական ցանկի համար, թէ ինչպէս կրնան օգտագործուիլ եւ բացայայտուիլ ձեր տեղեկութիւնները, եւ ինչպէս կրնաք մուտք գործել անոնց:



**Ինչպէ՞ս ԶԾԲ-ը եւ  
Տարածաշրջանային  
կեդրոնները կ'օգտագործեն  
անձնական տեղեկութիւնները:**

ԶԾԲ-ը եւ տարածաշրջանային կեդրոնները պէտք է ձեզ ազդարարեն Գաղտնիության վարժութիւններու մասին: Այս ազդը կ'ըսէ, թէ ինչպէս կ'օգտագործուին եւ կը բացայայտուին ձեր անձնական տեղեկութիւնները: Ան կը բացատրէ թէ ով կրնայ տեսնել ձեր

տեղեկութիւնները, ինչ իրաւունքներ ունիք եւ ուր գանգատիլ: ԶԾԲ-ի Գաղտնիության վարժութիւններու մասին ազդագիրը կարելի է գտնել այստեղ՝ [Գաղտնիության վարժութիւններու ազդագիր](#):



**Ո՞վ կրնայ մուտք գործել իմ  
Անձնական տեղեկութեան:**

ԶԾԲ-ը եւ տարածաշրջանային կեդրոնները պէտք է ձեր գրաւոր հրամանը խնդրեն, նախքան անոնք

կարենան ձեր անձնական տեղեկությունները տրամադրել ուրիշներուն, բացառութեամբ այն դեպքերու, երբ չկայ օրէնք, որը թոյլ կու տայ հրապարակումը, օրինակ՝ բուժման, վճարումի, կամ առողջապահական գործառնություններու նպատակով, կամ երբ օրէնքը կը պահանջէ տեղեկութեան բացայայտում:<sup>ii</sup>

Տեղեկութիւն հրապարակելու ձեր գրաւոր հրամանը երբեմն կը կոչուի «լիազորում»: Ան պետք է նշէ թէ ինչ տեղեկութիւն կարելի է տրամադրել, որու եւ ինչ նպատակով: Իրաւունք ունիք «ոչ» ըսելու՝ առանց վախճալու ճնշումներէն կամ փոխվրժէ: Իրաւունք ունիք փոխել ձեր կարծիքը որեւէ մէկ ժամանակ եւ ետ առնել ձեր գրաւոր արտօնութիւնը:<sup>iii</sup>

☒ **Կրնա՞մ տեսնել տեղեկութիւններս իմ ցուցանիշիս մէջ:**

Կրնաք խնդրել կարդալու կամ պատճեն ունենալու ձեր ցուցանիշին մէջի տեղեկութեան ՉԾԲ-ի եւ տարածքային կեդրոններուն մէջ: Ձեր ՉԾԲ ցուցանիշի խնդրանքը կրնաք կատարել հետեւեալ հղումով՝ [Ցուցանիշի խնդրանք](#): Դուք պետք է անմիջապէս կապուիք ձեր տարածաշրջանային կեդրոնին հետ եթէ կ'ուզէք մուտք գործել կամ պատճեն ունենալ ձեր տարածքային կեդրոնի ցուցանիշերուն:

Եթէ ձեր խնդրանքը մերժուի, ձեզ պետք է ըսուի պատճառը: Գործընթաց կայ, որուն միջոցով դուք կրնաք դիմել վերաքննութեան, եթէ ձեր խնդրանքը մերժուի:<sup>iv</sup>

☒ **Ինչպե՞ս կրնամ սրբագրութիւններ կատարել իմ**

**տեղեկութեան ցուցանիշերուս մէջ:**

Եթէ կը կարծէք, որ ձեր տեղեկութիւնները ճիշդ կամ ամբողջական չեն, կրնաք խնդրել ՉԾԲ-էն եւ տարածաշրջանային կեդրոններէն, որպէսզի փոխեն ձեր մասին տեղեկութիւնները ձեր ցուցանիշերուն մէջ: ՉԾԲ-ը եւ տարածաշրջանային կեդրոնները կրնան մերժել ձեր խնդրանքը: Եթէ այդ մէկը պատահի, կրնաք աւելցնել տեղեկագիր ձեր թղթածրարին մէջ, ուր կը բացատրուի տեղեկութիւնը:<sup>v</sup> Ձեր ՉԾԲ ցուցանիշերուն մէջ փոփոխութիւններ պահանջելու բանաձեւը կրնաք գտնել այստեղ՝ [Անձնական տեղեկութեան փոփոխման խնդրանք](#): Պետք է անմիջապէս կապուիք ձեր տարածքային կեդրոնին հետ եթէ կ'ուզէք փոխել ձեր տարածաշրջանային կեդրոնի տեղեկութիւնը:

☒ **ՉԾԲ-ը կամ տարածաշրջանային կեդրոնները տրամադրա՞ծ են իմ անձնական տեղեկութիւնը այլ մարդոց:**

Դուք իրաւունք ունիք հարցնել ՉԾԲ-ին եւ ձեր տարածաշրջանային կեդրոնին, որ ստացած է ձեր անձնական տեղեկութիւնը:<sup>vi</sup> Այս կը կոչուի «բացայայտումներու հաշուետւութիւն»: Ան պետք է պարունակէ բացայայտման թուականը, տեղեկութիւնը ստացած անձին անունը, ինչ տեղեկութիւն բացայայտուած է եւ անոր նպատակը:<sup>vii</sup> Կան որոշ բացառութիւններ այս պահանջքէն, գործիական ձեր կողմէն պահանջուած բացայայտումները կամ բուժման, վճարման կամ առողջապահական գործողութիւններու նպատակով:<sup>viii</sup> Եթէ կը ցանկանաք ՉԾԲ-էն բացայայտումներու հաշուետւութիւն, հաճեցէ՛ք նամակ ուղարկել [privacyofficer@dds.ca.gov](mailto:privacyofficer@dds.ca.gov):



**Ի՞նչ ընել, եթե կը կարծեմ, որ  
20Բ-ը կամ տարածաշրջանային  
կեդրոնը խախտած է օրենքը:**

Եթե մտահոգություններ ունիք, որ 20Բ-ը կամ տարածաշրջանային կեդրոններեն մեկը խախտած է օրենքը վարելու ձեր տեղեկությունները, 20Բ-ը գանգատ ներկայացնելու բազմաթիվ ընտրություններ ունի, որոնք կրնաք գտնել այստեղ՝ [Վերաքննումներ եւ գանգատներ](#):

Եթե դուք Փորթըրվիլ զարգացման կեդրոնի (Porterville Developmental Center) կամ Գանետոն սբրինկզ համայնքային հաստատության (Canyon Springs Community Facility) բնակիչ էք եւ կը կարծեք, որ հաստատությունը խախտած է օրենքը ձեր անձնական տեղեկության կամ գաղտնիության, կրնաք գանգատ ներկայացնել Գալիֆորնիայի հանրային առողջության բաժնին՝ [HIPAA/Գաղտնիության գանգատի բանաձև](#):

Նաեւ իրաւունքը ունիք գանգատելու Զաղաքացիական իրաւունքներու դաշնային գրասենեակին ձեր անձնական տեղեկություններու գաղտնիության կամ խորհրդապահության հետ կապուած դաշնային առողջապահական օրենքի հնարաւոր խախտումներու մասին: [ԱՄՆ Զաղաքացիական իրաւունքներու գրասենեակի գանգատման մուտքի օգնական](#):

Գալիֆորնիայի օրենքը ձեզ իրաւունք կու տայ դատ հարուցել՝ նահանգային օրենքներու եւ առողջապահական տեղեկության գաղտնիության խախտման որոշ դէպքերու մէջ վնասներու փոխհատուցման նպատակով:<sup>ix</sup>



**Արդեօ՞ք այս Փաստաթերթիկը  
կը վերաբերի ինձ, նոյնիսկ եթե  
ես ԱՄՆ քաղաքացի չեմ:**

Այո, այս իրաւունքները կը յատկացուին տարածաշրջանային կեդրոններու կողմէն աջակցուող բոլոր անհատներուն եւ անոնց ընտանիքներուն՝ անկախ անոնց ներգաղթի վիճակը: Սեպտեմբեր 8, 2022 թ-ին ընդունուած կանոնին համաձայն, Հայրենիքի ապահովութեան կողմէն՝ ոչ քաղաքացիները, որոնք կը ստանան առողջական կամ այլ առաւելութիւններ, որոնց իրաւունքն ունին, չեն տառապիր ներգաղթի վնասակար հետեւանքներէն՝ այդ առողջապահական կամ առաւելութիւնը ստանալու պատճառով:<sup>x</sup>



**Իմ ներգաղթի մասին  
տեղեկությունները կը  
բաժնեկցուի՞ն դաշնային  
կառավարութեան հետ:**

20Բ-ը եւ տարածաշրջանային կեդրոնները կամաւոր չեն բացայայտեր ձեր ներգաղթի տեղեկությունները Դաշնային գործակալութիւններուն: Սակայն, մենք կրնանք ստիպուած ըլլալ այդ մեկը կատարել, եթե պահանջուի օրենքով կամ դատարանի որոշմամբ:



**Արդեօ՞ք իմ  
վերարտադրողական  
առողջութեան մասին  
տեղեկությունը կը բացայայտուի  
հետաքննութեան համար:**

20Բ-ը եւ տարածաշրջանային կեդրոնները չեն գործածեր կամ բացայայտեր ձեր տեղեկութիւնը ոճրային, քաղաքացիական կամ վարչական հետաքննութեան համար՝ վերարտադրողական առողջութեան խնամք փնտրելու, ստանալու, տրամադրելու կամ օժանդակելու համար, եթե այդ առողջապահականը օրինական է

որոշ հանգամանքներու մէջ, բացառութեամբ այն դէպքերու, երբ ստիպուած է այդ մէկը ընել, եթէ պահանջուի օրէնքով կամ դատարանի որոշմամբ:<sup>xi</sup>

☒ **Կա՞ն լրացուցիչ աղբիւրներ, որոնք կրնան օգնել ինձ հասկնալու իմ անձնական տեղեկութիւններու նկատմամբ գաղտնիութեան իրաւունքներս:**

- ԶԾԲ Գաղտնիութեան քաղաքականութեան էջ.  
<https://www.dds.ca.gov/general/privacy-policy/>
- Գաղտնիութեան վարժութիւններու ԶԾԲ ազդագիր. [DS-5310 Գաղտնիութեան վարժութիւններու մասին մսխողներու ազդագիր 20230905.docx](#)
- ԶԾԲ իսկոյրանք մուտքի համար եւ/կամ Ձեր անձնական տեղեկութեան բանաձեւի պատճեններուն. [Մուտքի իսկոյրանք եւ /կամ Անձնական տեղեկութեան պատճեններ \(DS 5410\)](#) կամ հետեւեալ հղումով՝ [Ցուցանիշի իսկոյրանք](#)
- ԶԾԲ-ի իսկոյրանքը՝ փոխելու ձեր անձնական տեղեկութեան բանաձեւը. [Անձնական տեղեկութեան փոփոխման իսկոյրանք \(DS 5210\)](#)
- Գալիֆորնիայի Արդարութեան բաժինը: [Մսխողներու գաղտնիութեան աղբիւրներ](#)

Այս փաստաթերթը տեղեկատուական նպատակներու համար է եւ պէտք չէ մէկնաբանուի որպէս իրաւաբանական խորհուրդ կամ որպէս Գալիֆորնիա նահանգի քաղաքականութիւն: Ան հիմնուած է վկայակոչուած օրէնքներու վրայ որոնք գոյութիւն ունին 2024 թ. դեկտեմբերէն:

Եթէ որեւէ հարցի վերաբերեալ խորհուրդ կ'ուզէք, ապա պէտք է խորհրդակցիք փաստաբանի կամ այլ փորձագէտի հետ: Հոս կը գտնէք հանրային հաստատուն իրաւական ծառայութիւններու եւ ներգաղթի փաստաբաններու ցուցակները:

Այս փաստաթերթը կրնայ արտագծուի, եթէ՝ (1) արտագծուած շարադրութեան իմաստը չէ փոխուած կամ սխալ ներկայացուած, (2) վարկը կը տրուի Գալիֆորնիայի Չարագգման ծառայութիւններու բաժնին, եւ (3) բոլոր օրինակները կը բաժնուին անվճար:

<sup>i</sup>Գաղտնիութեան վարժութիւններուն ազդագրին մասին՝ 45 C.F.R. § 164.520, ԶԾԲ-ի Գաղտնիութեան վարժութիւններուն ազդագիրը կարելի է գտնել այստեղ՝ [DS-5310 Գաղտնիութեան վարժութիւններու մսխողներու ազդագիր 20230905.docx](#):

<sup>ii</sup> Արտօնութիւններու եւ գործածութեան եւ բացայայտումներու մասին՝ առանց արտօնութիւններու 45 CFR §§ 164.506, 164.508, եւ 164.512, [Գալիֆորնիայի բարեկեցութեան եւ հաստատութիւններու օրինագիրը, § 4514](#):

<sup>iii</sup> Վաւերական արտօնութեան տարրեր. 45 CFR § 164.508, Գալիֆորնիայի բարեկեցութեան եւ հաստատութիւններու օրինագիրը, § 4514:

<sup>iv</sup> Մուտքի իրաւունք. 45 CFR § 164.524, Գալիֆորնիայի Քաղաքացիական օրինագիրք §§ 1798.32, 1798.34, Գալիֆորնիայի Առողջութեան եւ ապահովութեան օրինագիրք § 123140

<sup>v</sup> Բարեփոխելու իրաւունք. 45 CFR § 164.526, Գալիֆորնիայի Քաղաքացիական օրինագիրք § 1798.35

<sup>vi</sup> Բացայայտումներու հաշուետւութեան իրաւունք. 45 CFR § 164.528(a), Գալիֆորնիայի Քաղաքացիական օրինագիրք §§ 1798.25 եւ 1798.28

<sup>vii</sup> Բացայայտումներու հաշուետւութեան տարրեր. 45 CFR § 164.528(b), Գալիֆորնիայի Քաղաքացիական օրինագիրք §§ 1798.25 եւ 1798.28

<sup>viii</sup> Բացայայտումներու հաշուետւութեան բացառութիւններ. 45 CFR § 164.528(a), Գալիֆորնիայի Քաղաքացիական օրինագիրք §§ 1798.25 եւ 1798.28

<sup>ix</sup> Բուժումներ. Գալիֆորնիայի Քաղաքացիական Օրինագիրք §§ 1798.45- 1798.57, Գալիֆորնիայի Բարեկեցութեան եւ հաստատութիւններու օրինագիրք § 4518

<sup>x</sup> [Նոր օրէնքը կը յստակացնէ, որ ոչ քաղաքացիները, որոնք կը ստանան առողջութեան կամ այլ առաւելութիւններ, որոնց իրաւունքն ունին, չեն տառապիր ներգաղթի վնասակար հետեւանքներէն | HHS.gov](#)

<sup>xi</sup> [Դաշնային արձանագիր 2024-08503 - HIPAA Գաղտնիութեան օրէնք՝ Պաշտպանելու վերարտադրողական առողջապահութեան գաղտնիութիւնը:](#)